Պաշտոնական ընդդիմախոս՝ բժշկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լազար Կարլենի Եսայանի

Գրախոսությունը

Աննա Աշոտի Ավետիսյանի՝ **«Ատամների դիսկոլորիտների բուժման արդյունքների կանխատեսումը և բարդությունների կանխարգելումը՝ պայմանավորված բուժման մեթոդների ընտրությամբ»** թեմայով,

ԺԴ.00.12 - ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Դիսկոլորիտները, որպես ատամների բնական գույնի խախտումներով ուղեկցվող կառուցվածքաֆունկցիոնալ և էսթետիկ խանգարումներ, պոլիէթիոլոգիկ են և ունեն մեծ տարածում բնակչության տարբեր շերտերում և տարբեր տարիքներում: Ժամանակակից ստոմատոլոգիայում դիսկոլորիտների բուժման լայն զինանոցը հնարավորություն է տալիս ընտրություն կատարել թերապևտիկ և ռեկոնստրուկտիվ մեթոդների միջև: Պացիենտի կյանքի՝ ստոմատոլոգիական առողջությամբ պայմանավորված որակի ցածրացումը, շփման կոմպլեքսների ձևավորումը հանգեցրել են դիսկոլորիտների բուժման, ինչպես նաև էսթետիկ նկատառումներով վերոհիշյալ մեթոդների կիրառման մեծ պահանջարկի: Խնդրի արդիականությունը և միջամտությունների մեծ պահանջարկը հասարակության ընդգրկուն շրջանակներում՝ մի կողմից և մյուս կողմից՝ դիսկոլորիտների վերացման համար առկա կոնսերվատիվ (սպիտակեցում) և ռեկոնստրուկտիվ (կարծր հյուսվածքների ռեզեկցիա՝ հետագա կոմպոզիտային վերականգնումով և վինիրների կամ լյումինիրների պատրաստումով և այլն) մեթոդների կիրառման անհրաժեշտության հստակ տարանջատման բացակայությունը լուրջ մարտահրավեր են ներկայացնում՝ բուժական միջոցառումների իրականացման անվտանգության և հնարավոր բարդությունների կանխարգելման տեսանկյունից: **Աննա Աշոտի Ավետիսյանի «Ատամների դիսկոլորիտների բուժման արդյունքների կանխատեսումը և բարդությունների կանխարգելումը՝ պայմանավորված բուժման մեթոդների ընտրությամբ»** ԺԴ.00.12 – ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը նվիրված է այդպիսի մարտահրավերների կասեցմանը, արդիական է և միտված է խնդրի լուծման արդյունավետության բարձրացմանը՝ հնարավոր բարդությունների կանխմամբ: Հեղինակը ստանձնել է ատենախոսական աշխատանքի շրջանակներում իրականացնել գործադրելի

նպատակ, այն է՝ ատամների սպիտակեցման եղանակների կլինիկական արդյունավետության համեմատական վերլուծությունը՝ հիմնված ազգային պատկանելության և բերանի խոռոչի ստոմատոլոգիական ստատուսի վրա: Նպատակի իրագործման համար առաջադրել և իրականացրել է համապատասխան խնդիրներ:

Գրականության վերլուծության բաժնում անդրադարձ է կատարվել տարբեր մեթոդներով ատամների սպիտակեցման առանձնահատկություններին, արդյունավետությանը, հնարավոր բարդություններին: Նա անաչառորեն, պատշաճ կերպով մեկնաբանել է գրականության տարբեր աղբյուրներում տեղ գտած հետազոտությունների արդյունքները և մանրամասն նկարագրել տարբեր հեղինակների տեսակետները ներկայացվող խնդրի վերաբերյալ:

Ատենախոսական աշխատանքում իրականացվել է 18-22 տարեկան տարբեր ազգերի ներկայացուցիչ՝ 952 ուսանողների ատամների գունային գամմայի վերլուծություն և դիսկոլորիտների առկայության բացահայտում: Հետազոտական գործընթացում կիրառվել են ինչպես ավանդական մեթոդներ, այնպես էլ ժամանակակից սարքեր և միջոցներ: Կատարվել է ատամների սպիտակեցում ժամանակակից մեթոդների և միջոցների կիրառմամբ և բերանի խոռոչի ստոմատոլոգիական ստատուսի հաշվառմամբ: Կատարվել է տացված տվյալների ադեկվատ վիճակագրական լայնածավալ մշակում: Համեմատական վերլուծության են ենթարկվել ստացված արդյունքները, պացիենտի տոմատոլոգիական ստատուսի և սպիտակեցումից հետո առաջացող բարդությունների միջև կորելացիոն կապի առկայությունը, ինչպես նաև բուժման մեթոդների ընտրությամբ պայմանավորված՝ հնարավոր բարդությունները՝ մշակելով և առաջարկելով բարդությունների կանխման և ռեաբիլիտացիոն սխեմա: Սեփական հետազոտությունների արդյունքներն ատենախոսը հանգամանորեն ներկայացրել է համապատասխան գլխի ենթաբաժիններում: Այս բաժինը հագեցած է աղյուսակներով, գծապատկերներով, լուսանկարներով և կլինիկական դեպքերով, որոնք ավելի պատկերավոր ու հասկանալի են դարձնում ատենախոսության արդյունքները:

Աշխատանքի նորույթներից է ստոմատոլոգիական ստատուսից կախված՝ բուժառուների ատամների սպիտակեցման անհատական օպտիմալ աստիճանի հաշվարկման՝ գործնական նշանակությամբ բանաձևի դուրսբերումը (սահմանում, մշակում), որով հստակեցվում է կոնկրետ պացիենտի ստոմատոլոգիական ստատուսին՝ մասնավորապես ատամների կարծր հյուսվածքների հանքային պարունակությանը համապատասխան՝ ատամների սպիտակեցման ցուցումների և հակացուցումների սահմանները, թույլատրելի աստիճանը, արդյունավետության գնահատումը, ելքի կանխատեսումը՝ կասեցնելով կարծր հյուսվածքների անդառնալի փոփոխությունների հնարավորությունը, որպես ռեաբիլիտացիայի չենթարկվող բարդություն: Դիտարկված խնդրի արդիականությունը հիմնավորում է կատարված հետազոտությունների

անհրաժեշտությունը, իսկ ստացված արդյունքները՝ շեշտում են աշխատանքի գործնական ելքն ու նշանակությունը: Դիսերտացիոն աշխատանքը ավարտուն է՝ հստակորեն ձևակերպված և շարադրված գրագետ հայերենով, բավականաչափ հագեցած՝ սեփական աշխատանքը նկարագրող նկարներով, աղյուսակներով, գծապատկերներով, հաշվառված են թեկնածուական ատենախոսական աշխատանքին ներկայացվող տեխնիկական նորմատիվ պահանջները: Ա.Ա.Ավետիսյանը աշխատանքի ընթացքում լիարժեքորեն իրագործել է խնդիրների կատարումը և հասել առաջադրված նպատակին: Գրախոսվող ատենախոսությունում գիտական դրույթները, եզրակացությունները և առաջարկությունները հիմնավորված են՝ կատարված մեծածավալ աշխատանքների համակարգված վերլուծությամբ: Կատարված ուսումնասիրությունների ծավալը բավար է նշանակալի արդյունքների ստացման համար: Ուսումնասիրվող աշխատանքի դիզայնը հստակ պլանավորված է հեղինակի կողմից, ձեռք բերված արդյունքների հուսալիությունը հիմնված է ապացուցողական բժշկության սկզբունքների վրա: Գործնական առաջարկությունները հիմնված են հետազոտության արդյունքների վերլուծությամբ ստավցած տվյալների վրա և լիովին իրագործելի են առաջատար բժիշկների գործունեության իրականացման համար՝ դրանով իսկ նպաստելով մատուցվող բժշկական օգնության որակի բարելավմանը:

Ընդհանրացնելու համար ատենախոսական աշխատանքի վերլուծությամբ ձևավորված իմ կարծիքը՝ ակնկալում եմ լսել հայցորդին ուղղված հետևյալ հարցերի վերաբերյալ պատասխաններ.

1. Ինչո՞վ եք հիմնավորում ատամների գունափոխությունների շտկման՝ Ձեր կողմից ընտրված մեթոդները:

2. Ինչպես հայտնի է, դիսկոլորիտների էթիոլոգիական գործոնները լինում են ներքին և արտաքին: Դուք սպիտակացրել եք միայն արտաքին գործոններով պայմանավորված դիսկոլորիտներով ատամները, սակայն որոշ աղբյուրներ համարում են, որ նման դեպքերում ատամների գույնի փոփոխումը հնարավոր է ստանալ նաև բերանի խոռոչի մասնագիտական հիգիենայի միջոցով: Հիմնավորեք, թե ինչու՞ եք Դուք կիրառել մասնագիտացված սպիտակեցման մեթոդներ:

3. Ատամների սպիտակեցման դեպքում հաշվի առնվե՞լ է արդյոք պացիենտի կլինիկական իրավիճակը՝ կարբամիդի պերօքսիդի կամ ջրածնի պերօքսիդի հիմքով սպիտակեցման միջոցների ընտրության համար:

Առաջարկում եմ առաջիկայում քննարկել Ա.Ա.Ավետիսյանի ատենախոսական աշխատանքի շրջանակներում ձևավորված հետազոտական տվյալների ներդրումը ԵՊԲՀ ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսումնական գործընթացում:

Եզրակացություն

Հիմնվելով իմ կողմից վերը ներկայացված փաստարկների, ինչպես նաև հայցորդի կողմից իմ հարցադրումներին ուղղված հիմնավոր և լիարժեք պատասխանների վրա՝ գտնում եմ, որ **Աննա Աշոտի Ավետիսյանի «Ատամների դիսկոլորիտների բուժման արդյունքների կանխատեսումը և բարդությունների կանխարգելումը՝ պայմանավորված բուժման մեթոդների ընտրությամբ»** ԺԴ.00.12 – ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքն իրականացվել է բարձր գիտական մակարդակով, ժամանակակից ախտորոշիչ և բուժիչ մեթոդների կիրառմամբ, ստացված արդյունքների պատշաճ վիճակագրական մշակմամբ: Ա.Ա.Ավետիսյանի ատենախոսության բովանդակությունը, արդիականությունը, գիտական նորույթը և գործնական արժեքը, եզրակացությունները և առաջարկությունները, թեմայի վերաբերյալ հրապարակումները լիովին համապատասխանում են բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ՀՀ բարձրագույն կրթության, գիտության կոմիտեի ընթացակարգի կանոնակարգին: Իսկ ատենախոս Աննա Աշոտի Ավետիսյանը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս, բժշկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լազար Կարլենի Եսայան

13.02.2026թ.

Պաշտոնական ընդդիմախոս պրոֆեսոր Լազար Կարլենի Եսայանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊԲՀ գիտական քարտուղար,
բժշկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Տաթևիկ Գետևոնի Ավագյան